ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՐՁ

Նախագահ Լարի Ս. Քեչեր՝ Արևելյան Եվրոպայի տարածքային նախագահության երկրորդ խորհրդական

Ներում

Ջոզեֆ Սմիթին ուղղված հայտնության մեջ Տերն ասել է. «Ուստի, ես ասում եմ ձեզ, որ դուք պետք է ներեք միմյանց. քանզի, ով իր եղբորը չի ներում նրա զանցանքները, դատապարտված կանգնած է Տիրոջ առաջ. քանզի նրա մեջ ավելի մեծ մեղք է մնում: Ես՝ Տերս, կներեմ, ում որ կներեմ, բայց ձեզանից պահանջվում է ներել բոլոր մարդկանց» (ՎԿՈ 64.9–10):

Մարգարե Ջոզեֆ Սմիթը ներողամիտ սրտի սքանչելի օրինակ է եղել Վիլյամ Վ. Ֆելփսի նկատմամբ՝ մի մարդու, որ դավաճանել էր մարգարեին: Եղբայր Ֆելփսը Եկեղեցու վաղ նորադարձներից էր և Վարդապետություն և Ուխտերի առաջին հրատարակությունը տպագրողը: Նա նաև բազմաթիվ օրհներգերի հեղինակ էր, այդ թվում՝ «Աստծո Հոգին» օրհներգի: 1838թ., երբ Եկեղեցին սաստիկ հալածանքի էր ենթարկվում, Ֆելփսը չդիմացավ ճնշմանը և կեղծ վկայություն տվեց Ջոզեֆ Սմիթի դեմ: Եկեղեցին հեռացրեց Ֆելփսին այդ արարքի համար, որի հետևանքով մարգարեն և այլ առաջնորդներ ավելի քան հինգ ամիս սխալմամբ բանտարկվեցին Լիբերթի բանտում: Ավելի քան մեկ տարի անց Ֆելփսը նամակ գրեց՝ ներում խնդրելով: Ջոզեֆը անկաշկանդ ներեց նրան և հրավիրեց գալ Նավու՝ գրելով. «Ե՛կ, սիրելի՛ եղբայր, քանզի պատերազմն ավարտված է, և նախկին ընկերները կրկին ընկերներ են»:

Եղբայր Ֆելփսը երբեք չմոռացավ մարգարեի բարությունը և ջերմությունը: Նա մնաց հավատարիմ մինչև իր կյանքի վերջը և դարձավ «Փառք տանք Մարդուն» օրհներգի հեղինակը:

Մեկ այլ լավ օրինակ է Հանս Պիտեր Միլլերի կյանքը: Եղբայր Միլլերը Յուտայի կենտրոնական մասում բնակվող աղքատ ֆերմեր էր: Նա երբեք շատ փող չէր ունեցել, սակայն նա ուներ ավետարանի օրհնությունները, որոնք հաստատուն տեղ էին գտել նրա սրտում: Մի օր հարևանը եկավ տեսնելու նրան, հայտնելով, որ իր կինը հիվանդ է և իրենց գումար է հարկավոր վիրահատության համար: Մտահոգվելով խեղճ եղբոր և նրա կնոջ համար, Եղբայր Միլլերը տվեց նրան իր տնտեսած ողջ գումարը:

Ոչ շատ ժամանակ անց Եղբայր Միլլերը տեսավ այդ նույն մարդուն նոր մեքենա վարելիս, և լսեց նաև, որ նրա կինը հիվանդ չէր: Վիրահատության համար փողն օգտագործելու փոխարեն, նա մեքենա էր գնել իր համար: Եղբայր Միլլերը ընտրության առաջ էր կանգնած: Նա կարող էր մեղադրանք առաջ քաշել այդ եղբոր առաջ ստելու համար: Նա կարող էր դատարանի առաջ կանգնեցնել նրան: Սակայն դա անելով, նա դառնության զգացումներ կառաջացներ, որոնք կփոխանցվեին իր ընտանիքին և այլ ընտանիքների, և, հավանաբար, կբաժանեին իրենց փոքր քաղաքը տարբեր ճակատների: Այնպես որ, Եղբայր Միլլերը այլ ուղի ընտրեց: Նա որոշեց ներել այդ եղբորը: Նա չբամբասեց և լուրեր չտարածեց նրա մասին: Տարիներ անց այդ մարդու երեխաները և թոռները Եղբայր Միլլերի երեխաների հետ նույն ծուխն էին այցելում որպես Եկեղեցու անդամներ: Նրանք չգիտեին տեղի ունեցած այդ վիրավորանքի մասին: Թեև Եղբայր Միլլերը լիովին արդար հիմքերով կարող էր հատուցում պահանջել, նա որոշեց ներել և թողնել դատաստանը Տիրոջը: Նրա արարքն անկասկած շատ ընտանիքների ազատեց ընդհարումներից և Եկեղեցում հնարավոր անակտիվությունից:

Խաչին գամված լինելով Փրկիչն ասաց. «Հա՛յր, ների՛ր դրանց, որովհետեւ չգիտեն, թէ ինչ են անում» (Ղուկաս 23.34): Մեր Քավիչը ցույց է տվել մեզ գթասրտության ուղին, որով յուրաքանչյուրս պետք է շարժվենք, եթե ցանկանում ենք խուսափել դառնությունից ու հակառակությունից և ունենալ ներդաշնակություն:

Թող որ մենք ունենանք փափուկ սիրտ, որպեսզի Տիրոջ Հոգին միշտ մեզ հետ լինի: Թող որ մենք միշտ ընտրենք մեր եղբայրներին և քույրերին ներելը: Թող որ մենք դառնանք Սիոնի ժողովուրդ, լինելով «մեկ սրտի և մեկ մտքի» (Մովսես 7.18): ■

Օժանդակ կազմակերպությունների ղեկավարները այցելում են Արևելյան Եվրոպայի տարածաշրջանի որոշ երկրներ

2015թ. հոկտեմբերի 9-19-ին Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու օժանդակ կազմակերպությունների ղեկավարներ քույր Ռոզմարի Մ. Վիքսոմը՝ Երեխաների Միության գերագույն նախագահը, և քույր Քերոլ Ֆ. Մակքոնկին՝ Երիտասարդ Կանանց գերագույն նախագահության առաջին խորհրդականը, այցելեցին Արևելյան Եվրոպայի տարածաշրջանի մի քանի երկրներ:

Քույր Քերոլ Ֆ. Մակքոնկին իր ամուսնու հետ հանդիպեց Եկեղեցու անդամների հետ Կիևում, Երևանում, Սամարայում և Սարատովում: Ռուսաստանի Սամարայի միսիայի ճյուղերում անդամների ու այցելուների հետ հանդիպման ժամանակ նա խորհուրդ տվեց անդամներին՝ ծառայության և փոխադարձ օգնության մթնոլորտ ստեղծել իրենց տներում և կիսվեց տարբեր փորձառություններով աշխարհի տարբեր մասերի Եկեղեցու անդամների կյանքից, թե ինչպես են սրբերը հաղթահարում դժվարությունները, մեծացնում երեխաներին և երիտասարդներին:

Որպես իրենց ուղևորության մաս, քույր Ռոզմարի Մ. Վիքսոմը ամուսնու հետ այցելեցին Ռիգա, Վիլնյուս, Տալլին, ինչպես նաև Մոսկվա և Սանկտ Պետերբուրգ, որտեղ հանդիպեցին Եկեղեցու տեղական ղեկավարների և անդամների հետ:

Քույր Ռոզմարի Մ. Վիքսոմ

Քույր Քերոլ Ֆ. Մակքոնկի

Փորձելով հասկանալ տեղական մասնաճյուղերի առանձնահատկությունները, քույր Վիքսոմն ու քույր Մակքոնկին ձգտել են առավելագույնս օգտակար լինել հոգևոր աջակցությամբ՝ Երեխաների Միությանը և Երիտասարդ Կանանց վերաբերող հարցերում: ■

ՏԵՂԱԿԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երիտասարդ Կանանց գերագույն նախագահության առաջին խորհրդական՝ քույր Քերոլ Ֆ. Մակքոնկիի ելույթը 2015թ. հոկտեմբերի 17-ին Երևանում կայացած Եկեղեցու ղեկավարների ուսուցմանը

Մարիետա Կարապետյան, Երևան ճյուղ, Երևան-Հայաստան ցից

Յուրաքանչյուր միջոցառում, յուրաքանչյուր դաս, ամեն բան, ինչ անում ենք Եկեղեցում, ուղղում է մեզ դեպի Տերը և Նրա սուրբ տունը¦:

Իր ելույթում քույր Մակքոնկին ասաց, որ հիացած է Հայաստանի եկեղեցու անդամներով, որոնք լավ միսիոներներ են և որոնց ջանքերի շնորհիվ եկեղեցին բարգավաճում է Հայաստանում: Քույր Մակքոնկին ղեկավարների հետ կիսվեց ուսուցման սկզբունքներով, որոնք վերաբերում են երիտասարդների հետ աշխատանքին, ինչպես նաև կիրառելի են մյուս օժանդակ կազմակերպությունների ծառայության մեջ: Նա նշեց ուսուցման արդյունավետ նյութեր, որոնց թվում կարևորեց Լիահոնա ամսագիրը: Նա շեշտեց, որ ամսագրում ուսուցանելու հրաշալի գաղափարներ կան, ինչպես երեխաների, երիտասարդների, այնպես էլ չափահասների համար:

Լիահոնայում կարելի է կարդալ մարգարեի ուղերձը, գտնել մտքեր ընտանեկան երեկոների, միջոցառումների համար և այլն: Որպես ևս մեկ ուսուցման աղբյուր քույր Մակքոնկիին ակնարկեց եկեղեցու հայկական՝ www.hqvose.am կայքը: Նա ասաց, որ այս կայքում հայերեն թարգմանված բազմաթիվ նյութեր կան, որոնք կարող են օգնել մեզ մեր ծառայության մեջ, ներառյալ մարգարեների և առաքյալների խոսքերը: Նրա խորհուրդն էր, որ եթե ցանկանում ենք հաջողությամբ ծառայել, պետք է հաճախակի ընթերցենք այդ կայքէջը:

Քույր Մակքոնկիին նշեց Հանգստյան օրը սուրբ պահելու և այդ օրը հաղորդությունն ընդունելու կարևորությունը, որպեսզի Հոգին մեզ հետ ունենանք: Նա նշեց նաև, որ որպես ղեկավարներ մեր մեծագույն պարտականությունը պետք է լինի՝ ուղղորդել երիտասարդներին դեպի տաճար: Մի տեսանյութ ցուցադրվեց տաճարի կարևորության մասին և մեջբերվեցին նախագահ Ռասսել. Մ. Նելսոնի այս խոսքերը. «Յուրաքանչյուր միջոցառում, յուրաքանչյուր դաս, ամեն բան, ինչ մենք անում ենք Եկեղեցում, ուղղում է մեզ դեպի Տերը և Նրա սուրբ տունը»: Քույր Մակքոնկիին խորհուրդ տվեց օգնել, որ յուրաքանչյուր երիտասարդ աղջիկ և երիտասարդ տղա ունենա տաճարի սահմանափակ օգտագործման երաշխավորագիր: Խոսվեց նաև այն մասին, թե որքան կարևոր է, որ մենք հրավիրենք մարդկանց գալ Քրիստոսի մոտ: Նա ասաց, որ երբ մենք դա անում ենք, ապա կանգնում ենք Փրկչի կողքին: Մենք անում ենք այն, ինչ Նա կաներ, և ասում ենք այն, ինչ Նա կասեր: ■

«Առաջ մղվեք Քրիստոսի հանդեպ հաստատամտությամբ»

Երիտասարդների համաժողովի կազմակերպիչներ

2016 թվականի հունվարի 6–9-ին Ծաղկաձորում անցկացվեց եկեղեցու երիտասարդների համաժողով 14–17 տարեկան երիտասարդների համար: Համաժողովի թեման առաջ մղվելն էր՝ Քրիստոսի հանդեպ հաստատամտությամբ:

Դուք ձեր կյանքի օդաչուն եք և ճիշտ կառավարելու դեպքում, կարող եք այն միշտ բարձրության վրա պահել: Այդպիսին էր համաժողովի դասերից մեկի թեման, որը հորդորում էր երիտասարդներին չցածրացնել ավետարանի չափանիշները, որոնցով նրանք ապրում են: Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆը՝ Առաջին Նախագահության խորհրդականը, ասել է. «Հոգևոր ուժի մեծ աղբյուր է ազնիվ և արդար կյանքով ապրելը, երբ մեր ուշադրության կենտրոնում այն նպատակակետն է, թե որտեղ ենք ուզում լինել հավերժության մեջ» («Դուք կարող եք անել դա հիմա», Լիահոնա, նոյեմբեր 2013, էջ 57): Երիտասարդները թղթե ինքնաթիռ պատրաստեցին ու օդ բարձրացրեցին, որպեսզի հիշեն ուսուցանվող սկզբունքները: Երկրի ձգողության և օդի դիմադրողականության ուժերը ցած են քաշում և կանգնեցնում են օդանավի առաջընթացը, սակայն նրան հակադրվող հրման և բարձրացման ուժերն օգնում են, որպեսզի օդանավը թռչի և առաջ մղվի:

Հակադրությունը անհրաժեշտ է նաև մեր զարգացման համար (2 Նեփի 2.11): Մինչ անկատարության զգացումն ու մեղքի ծանրությունը քաշում են վար, Քրիստոսը հույս է տալիս, օգնում է ապաշխարել, բարձրացնում և օգնում է առաջ մղվել: Աստծո խոսքը օգնում է առաջ մղել: Սուրբ գրություններն օգնում են ամեն օր առաջ մղվելու ուժ ստանալ: Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդը՝ Տասներկու Առաքյալների քվորումից, ասել է. «Եղե՛ք ուժեղ: Հավատարմորեն ապրեք ավետարանով, եթե նույնիսկ ուրիշները ձեր շրջապատում դրանով ընդհանրապես չեն ապրում» («Աշակերտ լինելու գինը և օրհնությունները», Լիահոնա, 2014 մայիս, էջ 6): Երիտասարդները մարգարեների ու առաքյալների խոսքերով էջանիշներ ստացան, որպես հիշեցում, որ պահպանեն հոգևոր անհրաժեշտ բարձրությունը:

Դուք Ձեր կյանքի օդաչուն եք:

Համաժողովի բոլոր ծրագրերը կազմակերպված էին այնպես, որպեսզի օգնեին երիտասարդներին հիշել Նեփիի խոսքերը. «Առաջ մղվեք Քրիստոսի հանդեպ հաստատամտությամբ, ունենալով հույսի կատարյալ պայծառություն, և սեր՝ Աստծո հանդեպ և բոլոր մարդկանց հանդեպ: Ուստի, եթե դուք առաջ մղվեք, սնվելով Քրիստոսի խոսքով, և համբերեք մինչև վերջ, ահա, այսպես է ասում Հայրը. Դուք կունենաք հավերժական կյանք» (2 Նեփի 31.20): ■

2016թ. Երիտասարդների համաժողովի մասնակիցները

Խորացնել ուսումը Սեմինարիայում և Ինստիտուտում

Վարուժան Պողոսյան, Եկեղեցական կրթության համակարգող, Երևան-Հայաստան ցից

Ավետարանի վերականգնումից հետո Տերը վերահաստատել է ուսման կարևորությունը, տալով հետևյալ հայտնությունը. «Անհնար է, որ մարդ փրկվի անգիտության մեջ» (ՎԵՈՒ 131.6):

Վերջին տարիներին Տերը հրաշալի հայտնություններ է տվել, որպեսզի Եկեղեցու երիտասարդների ուսումը բարելավվի, արժանավորության չափանիշները բարձրացվեն, որպեսզի նրանք ապավինեն Հիսուս Քրիստոսին և հասկանան Նրա ուսմունքներն ու Քավությունը, արժանի լինեն տաճարային օրհնություններին և պատրաստեն իրենց, իրենց ընտանիքներին և մերձավորներին իրենց Երկնային Հոր հետ հավերժական կյանքին:

Նախագահ Այրինգը՝ Առաջին նախագահության Առաջին խորհրդականը, բացատրել է. «Հոգևոր ուժը, որը միայն մի քանի տարի առաջ բավարար էր մեր երիտասարդությանը՝ ամուր կանգնելու համար, շուտով բավարար չի լինի» (CES Conference on the Book of Mormon, 14 August 2001, Brigham Young University) և հորդորել է երիտասարդների ուսուցիչներին բարձրացնել ակնկալիքները: «Մեզ սպասվող ժամանակների վտանգներից մեկն այն է, որ մենք գուցե նվազեցնենք ակնկալիքները մեր և այն երիտասարդների հանդեպ, ում ծառայում ենք: Երբ աշխարհի մթությունը շատանա, նույնիսկ մասնակի դարձի գալը և որոշակի հոգևոր փորձառություն ունենալը, աշխարհի համեմատ գուցե ավելի ու ավելի ակնառու թվա: Մենք գուցե գայթակղվենք ավելի քիչ ակնկալել: Սակայն, Տերը մեզ տվել է մեկ այլ ազդանշան՝ հստակ և հզոր: Դա այն է, որ մենք պետք է ոչ թե ավելի քիչ, այլ ավելի շատ ակնկալել մեր երիտասարդներից» (Church Educational System satellite training broadcast, Aug. 4, 2004):

Խորացրեք ուսման ձեր փորձառությունը:

Եկեղեցու երիտասարդ տղաների և աղջիկների ծրագրերը բարելավվել են և նպաստում են, որ երիտասարդները սովորեն իրենց պարտականությունն Աստծո առաջ, պաշտպանեն ճշմարտությունն ու արդարակեցությունը՝ անձնական զարգացման շնորհիվ: Կիրակնօրյա ուսուցումն ավելի

անհատական է դարձել «Հետևիր ինձ» ծրագրի միջոցով, որն օգնում է երիտասարդներն ուսուցանվել՝ ըստ իրենց կարիքների ու հասկացողության:

Սեմինարիայի և Ինստիտուտի ծրագրերը ևս նպաստում են երիտասարդների ամրապնդման գործին՝ աշխատանքային օրերին կրոնական կրթություն ապահովելով Եկեղեցու դեռահաս և չափահաս երիտասարդներին:

Տերը բարձրացել է ակնկալիքները նաև Սեմինարիայի և Ինստիտուտի ուսանողների համար: Ե՛վ Սեմինարիայի, և՛ Ինստիտուտի ուսանողներից այժմ ակնկալվում է գիտելիքների գնահատման ստուգարք հանձնել, որն օգնում է, որպեսզի նրանք ավելի իմաստալից փորձառություն ունենան սուրբ գրություններն ու մարգարեների խոսքերն ուսումնասիրելիս: Նրանցից ակնկալվում է ընթերցել ուսուցանվող դասընթացի նյութերը և կատարել տնային գրավոր աշխատանքներ: Ինստիտուտի ստուգարքն օգնում է երիտասարդներին արտահայտել իրենց համոզմունքները: Ի լրումն կրոնական մյուս դասընթացների՝ Ինստիտուտում ավելացել են նոր հիմնարար դասընթացներ, որոնք օգնում են չափահաս երիտասարդներին սովորել Հիսուս Քրիստոսի և հավերժական ավետարանի, Հավերժական ընտանիքների, Ավետարանի վերականգնման հիմքերի և Մորմոնի գրքի մասին:

Տերը միջոցներ է ձեռնարկում, որպեսզի Իր սերունդը ուսուցանված լինի և «սովորի իմաստություն [իր] երիտասարդության տարիներին. այո, [իր] երիտասարդության տարիներին սովորի պահել Աստծո պատվիրանները» (Ալմա 37.35): ■

Ղափամայի օրը և ավետարանի ուրախությունը

Լուսինե Խաչատրյան և Սուսաննա Սերգոյան,
Աջափնյակ ծուխ, Երևան-Հայաստան ցից

Աջափնյակ ծուխը հարուստ է արդեն ավանդույթ դարձած միջոցառումներով: Այստեղ պարբերաբար նշվում են մայրության և նորածնի լույս աշխարհ գալու ուրախ առիթները, նոր անդամների մերձեցումը հին անդամների հետ, ընտանեկան երեկոներ, տնարարության դասեր և այլ միջոցառումներ:

Ծխի անդամների ամենաշատ սպասված ու ամենասիրելի միջոցառումներից մեկը ղափամայի օրն է, երբ ծխում ղափամա ենք պատրաստում, որի նկատմամբ ոչ ոք անտարբեր չի կարող մնալ: Ղափաման յուրօրինակ համով ու բուրմունքով հին հայկական խոհանոցի ուտեստ է: Այս տարի համեղ ու հյութալի դդումները մեզ սիրով տրամադրել էին եկեղեցու անդամները, որոնք իրենց ձեռքերով էին աճեցրել դրանք: Ծխի անդամներից շատերը մասնակցեցին նախապատրաստական աշխատանքներին՝ օգնեցին մաքրել դդումները, կազմակերպեցին հետաքրքիր խաղեր և ուրախ պարեր:

Միջոցառումը սկսվեց հոգևոր մտքով՝ «Այո, բոլոր բաները, որ բխում են երկրից . . . ստեղծված են մարդու օգտի և գործածության համար՝ թե՛ աչքը շոյելու և թե՛ սիրտն ուրախացնելու համար. Այո՛, սննդի և հագուստի համար, համի և հոտի համար, մարմինն ամրացնելու և հոգու կենարարության համար» (ՎևՈ 59:18–19): Այնուհետև, ավանդական «Ղափամա» երգի հնչյունների ներքո բաժանվեց մեղրածոր դդումն իր համեղ միջուկով: Թե՛ մեծերը, թե՛ փոքրերը հաճույքով համտեսեցին համեղ ուտեստը և օրը վերածվեց տոնի: Անցկացվեցին խաղեր ու պարեր, հնչեց ուրախ երաժշտություն և ծուխը նմանվեց ուրախ համերաշխ ընտանիքի: Կային մարդիկ, ովքեր առաջին անգամ էին եկել, նաև հյուրեր, ովքեր երկար տարիներ մեզ հետ ընկերություն են անում. բոլորը միաձուլվել էին սիրով ու երջանիկ էին: Ազգային ճաշը հոգևոր ուրախության և ցնծության առիթ դարձավ: Ղափամանն եկեղեցում ավետարանի ուրախություն դարձավ. բոլորը գոհ էին Աստծո պարգևած բարիքներից: ■

Քույրեր Սուսաննա Սերգոյանը և Անժելա Սմբատյանը՝ Ղափամայի օրը

Սա քո կյանքի ամենաերջանիկ պահն է. ուրախացի՛ր:

Հերբերտ Մաթևոսյան, Վանաձոր ծուխ, Երևան -Հայաստան ցից

Հերբերտ Մաթևոսյանի ընտանիքը

Տարիներ առաջ վերադառնում էի աշխատանքից: Թեթև անձրև էր մաղում: Տեսա վայելուչ հագնված երկու երիտասարդների: Մեկը ականջիս շշնջաց. «Մոտեցիր, ծանոթացիր, բարևիր և տուն հրավիրիր նրանց»: Ես այդպես էլ վարվեցի: Նրանք ներկայացան իմ ընտանիքի անդամներին, պատմեցին իրենց մասին, ցույց տվեցին իրենց ընտանեկան ալբոմները: Նրանք եկել էին Ամերիկայից, գտնվում էին միսիոներական ծառայության մեջ: Սկսեցին շուտ-շուտ այցելել իմ ընտանիքի անդամներին: Վերջապես մի օր իմացա, որ նրանք մկրտելու են իմ յոթ հարազատներին: Մկրտությանը ես էլ մասնակցեցի:

Միսիոներները սկսեցին դասեր անցկացնել ինձ հետ: Այդ ժամանակ ես ծխում էի և չէի հավատում, որ կարող էի թողնել ծխելը: Բայց կամքի ուժս ավելացավ և ես թողեցի այդ վատ սովորությունը: Ես շարունակեցի ապաշխարել և, վերջապես, պատրաստ էի մկրտության: Ես մկրտվեցի և դարձա Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ: Անմիջապես մերվեցի Եկեղեցու առօրյա կյանքին: Շուտով քահանայություն ստացա: Տղաս և թոռս ևս քահանայության կրողներ դարձան: Ընտանիքիս բոլոր անդամները սկսեցին Եկեղեցում ծառայություն կատարել ծխի տարբեր կոչումներում:

Արագ անցավ առաջին տարին, և մենք ընտանիքով մեկնեցինք Տիրոջ տուն՝ Կիևի տաճար: Ես և կինս կնքման սենյակում էինք, երբ հանկարծ ներս եկան մեր երեխաներն ու թոռները: Բոլորը տաճարային սպիտակ զգեստով էին: Ես երջանիկ էի տեսնելու բոլորին: Այդ ժամանակ մեկը ականջիս շշնջաց. «Սա քո կյանքի ամենաերջանիկ պահն է. ուրախացի՛ր»: Ես ուրախությունից սկսեցի անձայն արտասվել: Սուրբ Հոգին էր, որ շշնջաց իմ ականջին: Դա մի անմոռանալի երջանիկ պահ էր իմ կյանքում, որի համար արժեր յոթանասուն տարի ապրել:

Ես վկայում եմ, որ Սուրբ Հոգին իրական է, որ Նա մարդկանց հուշում է ճշմարտությունը: Ես վկայում եմ, որ Ջոզեֆ Սմիթի միջոցով վերականգնվել է Աստծո քահանայությունը, որի զորությամբ երկրի վրա կատարվող փրկարար արարողությունները կնքվում են նաև երկնքում և ուժ ունեն հանդերձյալ կյանքում: Ջոզեֆ Սմիթը Աստծո մարգարեն էր: Թոմաս Ս. Մոնսոնն Աստծո ապրող մարգարեն է ու խոսնակը երկրի վրա: ■

ԻՆՉՊԵՍ ԵՄ ՃԱՆԱՉԵԼ

Իմ երջանկությունը Հայաստանում եմ գտել

Ստեփան Մահշիկյան, Երևան ցյուղ, Երևան-Հայաստան ցից

Ես ծնվել և ապրել եմ Սիրիայի Հալեպ քաղաքում՝ բողոքականների ընտանիքում: Աշխատանքի բերումով շփվել եմ կաթողիկե եկեղեցու հետ: Կաթողիկե եկեղեցու միսիոներական խմբի հետ 3 տարի ծառայել եմ Եվրոպայի տարբեր երկրներում՝ օգնելով ու հոգ տանելով փախստականների և հաշմանդամների համար: Կարիքավորներին ու աղքատներին մենք սովորեցնում էինք ձեռքի աշխատանքներ անել: Պատրաստում էինք ձեռագործ արվեստի նմուշներ և վաճառում, ստացված գումարը տրամադրելով նրանց: Այդ տարիների իմ ծառայությունը մեծ ազդեցություն թողեց իմ հետագա կյանքի վրա:

Սիրիա վերադառնալուց հետո ես որոշեցի ընտանիք կազմել և եկա Հայաստան, գտա իմ կյանքի զուգընկերուհուն, ամուսնանացա հայ աղջկա՝ Կարմենի հետ և կրկին վերադարձա Սիրիա: 5 տարի երջանիկ ապրելուց հետո Հալեպում պատերազմ սկսվեց և մենք, թողնելով մեր ապրուստն ու ունեցվածքը, տեղափոխվեցինք Հայաստան: Երբ նոր էի եկել, աշխատանք էի փնտրում և քանի որ մի քանի օտար լեզուներ գիտեի, որոշեցի զբոսավար աշխատել՝ մարդկանց ցույց տալ արևմտյան Հայաստանի պատմական հողերը:

Մի անգամ իմ խմբում կար մի գործարար ամերիկահայ մարդ: Նա մեծ գործեր էր ղեկավարում և ուներ շուրջ 5000 աշխատողներ: Մենք 15 օր միասին ճամփորդեցինք և լավ ընկերներ դարձանք: Նա ինձ ասաց, որ ես շատ նման եմ մորմոնականի: Ես չգիտեի, թե ինչ էր նշանակում մորմոնականը և զարմացել էի: Նա ինձ պատմեց այս Եկեղեցու մասին (անձամբ ինքը անդամ չլինելով) և ասաց, որ մորմոնականները շատ վստահելի մարդիկ են, և որ նա իր աշխատողներին ընտրելիս նախապատվությունը մորմոնականներին է տալիս: Ես շատ հետաքրքրվեցի:

Ամերիկա մեկնելուց հետո նա ինձ ուղարկեց եկեղեցու տվյալները այստեղ Երևանում, և ես գնացի Եկեղեցու գրասենյակ: Թեև այցս սկզբում գործնական էր՝ այդ մարդու մի պատվերով, սակայն ես հույս ունեի ծանոթանալ Եկեղեցու հետ: Շուտով ես մկրտվեցի: Մեծ օրհնություն եմ համարում այն փաստը, որ այդքան տարիներ Սիրիայում ապրելով և Եվրոպայում տարբեր երկրներում աշխատելով, ծառայելով, սովորելով, ես միայն Հայաստանում հանդիպեցի և՛ կնոջս, և՛ Հիսուս Քրիստոսի ճշմարիտ եկեղեցին, որոնք իմ երջանկության աղբյուրներից երկուսն են: Ես շատ եմ սիրում եկեղեցին:

Անցյալ տարի մեծ դժվարություններ հաղթահարելով (սիրիական ծագում ունենալու պատճառով) հասանք Տիրոջ տաճար և վերջապես կնքեցինք մեր ամուսնությունը հավերժության համար, ապա կնքվեցինք մեր սիրելի դստեր Ստեֆանիի հետ՝ որպես հավերժական ընտանիք: Կիևի տաճարում մենք առաջին սիրիաբնակ ընտանիքն էինք, որ կնքումներ էր կատարում: Ես շատ եմ սիրում Աստծուն և երախտապարտ եմ, որ Նա օգնել է ինձ գտնել իմ երջանկության աղբյուրներից երկուսը՝ Տիրոջ Եկեղեցին և իմ հավերժական զուգընկերուհուն: ■



Ստեփան Մահշիկյանը կնոջ և դստեր հետ Կիևի տաճարի մոտ

Գթությունը Քրիստոսի մաքուր սերն է, որը հարատևում ու երբեք չի խափանվում:

Վարինկա Ավագյան, Արտաշատ ծուխ, Երևան-Հայաստան ցից

Վարինկա Ավագյանը

Իմ կյանքի ընթացքում ես անընդհատ մտածել եմ, թե ինչպես օգտակար լինեմ մարդկանց: Որպես հոգեբան ես ստեղծել եմ Բարեգործական Միություն և նպատակ դրել՝ օգնել հաշմանդամներին: Ես շփվել եմ հաշմանդամների հետ, հետազոտել նրանց խնդիրները, որոնք բազմաթիվ են եղել՝ թե սոցիալական, թե՝ առողջապահական բնույթի, և փնտրել եմ ուղիներ՝ դրանք լուծելու կամ թեթևացնելու: Ես իրականացրել եմ բազում ծրագրեր, ներգրավելով հաշմանդամներին, որպեսզի նրանք հասարակության մեջ իրենց լիարժեք մարդ զգան: Ես գիտեի, որ աստվածահաճո գործ եմ անում և Նա ինձ ուժ էր տալիս: Աղոթքի ուժը ինձ սովորեցրել էին իմ ընտանիքում, մասնավորապես տատիկս: Ես զգում էի, որ ամեն կազմակերպած գործում Աստված ինձ հետ է, զգում էի մեծ եռանդ և երբեք չէի տրտնջում: Երբ դժվարություններ էի ունենում, դրանք հրաշքով հարթվում էին:

Մի օր պատրաստվում էինք մեծ միջոցառման, որին պետք է ներկա լինեին շատ հաշմանդամներ, հրավիրված էին մի քանի նախարարներ: Ծրագիրը բարեգործական էր: Հրավիրել էի երգիչների, երգիծաբանների, պարային խմբերի, որոնք սիրով ցանկացել էին մասնակցել և աջակցել: Այն պահին, երբ լարված ու անհանգիստ էի, դրսում ինձ մոտեցան երկու օտարազգի հաճելի երիտասարդներ: Երբ նրանք մոտեցան, բարևեցին ինձ, ձեռք սեղմեցին, ժպտացին, ես կարծես մոռացա լարվածությունս. մի հանգստություն իջավ ինձ վրա: Նրանք հայերեն խոսեցին Քրիստոսի մասին, Նրա կատարած գործերի մասին, Մորմոնի Գրքի մասին և ինձ հրավիրեցին Արտաշատում նոր բացվող Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի:

Այդպիսով, մարդասիրական իմ գործերն ու ջանքերն անհատույց չմնացին: Տերն ինձ օրհնեց և ես գտա Նրա ճշմարիտ Եկեղեցին: 2004 թվականից ես մեծ սիրով հաճախում եմ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին: Ես շատ եմ սիրում Հիսուս Քրիստոսին: Ուսումնասիրում եմ սուրբ գրությունները: Այժմ ծառայում եմ Եկեղեցում և սփոփում ու կարեկցում եմ իմ քույրերին ու եղբայրներին, այսինքն՝ հնարավորություն ունեմ շարունակելու այն գործը, որը սիրում եմ: Ես մարդկանց շատ եմ սիրում և հետևյալ մաղթանքն եմ հղում բոլորին՝ սիրեք մեկմեկու, գթություն ունեցեք և կարեկից եղեք միմյանց: Գթությունը՝ Քրիստոսի մաքուր սերն է, և այն երբեք չի խափանվում ու երբեք չի վերջանում (տես Մորոնի 7.46–47): ■

Խմբագրության կողմից

«Հայաստանի նորությունները» բաժինը թողարկվում է տարածքային Նախագահության ղեկավարության ներքո: Այս բաժնում տպագրվող՝ «Տեղական նորությունները», «Տեղական Վերջին Օրերի Սրբերի ձայները», «Սուրբ գրությունների սիրված հատվածները», «Ցգտում եմ նմանվել Հիսուսին», «Ինչպես եմ ճանաչել», «Միսիոներական Ծառայության իմ փորձառությունը», «Պատմության էջեր», «Կարծիքներ» խորագրերը պարունակող նյութերը համապատասխանում են Հայաստանում Եկեղեցու անդամների հոգևոր կարիքներին և կազմվում են տեղական ծխերից ու ճյուղերից ուղարկվող նյութերի հիման վրա: Այսպիսով, Նորություններ բաժնի խմբագրական կոլեգիան հրավիրում է ձեզ՝ մեր ընթերցողներին, կիսվել ձեր յուրօրինակ հոգևոր փորձով, ուղարկելով այդ տեղեկատվությունը՝ karapetyanm@ldsmail.net կամ kharlamovamv@ldschurch.org էլեկտրոնային հասցեներից մեկին: Հուսով ենք, ձեր ակտիվության շնորհիվ բաժնի էջերին կհայտնվեն տպավորիչ նյութեր և Եկեղեցու տեղական անդամները կկարողանան իմանալ երկրի տարբեր անկյուններում ապրող իրենց եղբայրների ու քույրերի կյանքի հետաքրքիր իրադարձությունների ու միջոցառումների և ավետարանն իրենց կյանքում կիրառելու մասին: ■